

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

N	Օրենսդրական ակտի անվանումը	Նշումներ, ներկայացում
1.	<p><b>ԳՆԱՍ N3 (546) Փետրվարի 1, 2016թ.</b></p> <p><i>ՀՀ Ֆինանսների նախարարի 08.01.2016թ. N1-Ն Հրաման՝ 31.10.2014թ.-ի ՀՀ Ֆինանսների նախարարի N764 հրամանում փոփոխություն կատարելու մասին</i></p>	<p>Խոսքը վերաբերում է Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին հրամանին:</p> <p>Այս փոփոխությամբ շրջանառության հարկ վճարող համարվելու համար հայտարարության մեջ</p> <ul style="list-style-type: none"> <li>• նշվող շեմը 58.35մլն. դրամից-ից դարձել է 115.0 մլն դրամ (նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մատվ մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի, <b>չպետք է գերազանցի 115.0 մլն դրամը.</b>)</li> <li>• Սույն հայտարարությունը ներկայացնում են ոչ միայն այն առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) <b>չի պատկանում</b> ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձին, այլև այնպիսիները, որոնց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) <b>պատկանում է</b> ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձին, որոնք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և փաստացի գործունեություն չեն իրականացնում.</li> <li>• Սույն հայտարարությունը ներկայացնում են ոչ միայն այն առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) <b>չի պատկանում</b> անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը), այլև այնպիսիները, որոնց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) <b>պատկանում է</b> անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական</li> </ul>

*Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:*

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

	<p>Հրամանն <b>ուժի մեջ է մտնում</b> պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</p>	<p>(բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը), որը հարկային մարմին է ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և փաստացի գործունեություն չի իրականացնում.</p> <ul style="list-style-type: none"> <li>Սույն հայտարարությունը ներկայացնում են ոչ միայն այն առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը կամ նոտարները, որոնց <b>չի պատկանում</b> ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը), այլև այնպիսիք, որոնց պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը), որը հարկային մարմին է ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և փաստացի գործունեություն չի իրականացնում:</li> </ul>
<p>2.</p>	<p><b>ՊՏ N8 (1188) Փետրվարի 3, 2016թ.</b></p> <p>ՀՀ Կառավարության 20.01.2016թ. N41-Ն Որոշում՝ «Մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման արդյունքների՝ համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինման կարգը սահմանելու մասին»</p> <p>Որոշումն <b>ուժի մեջ է մտնում</b> պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</p>	<p>Կարգով կարգավորվում են «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքում ապրանքների վերամշակման արդյունքների՝ համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինման հետ կապված հարաբերությունները, եթե վերամշակման գործողություններն են համարվում հատուցելի (վճարովի) կամ անհատույց (երաշխիքային) վերանորոգումը:</p>

*Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:*

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p>3.</p>	<p><b>ՊՏ N9 (1189) Փետրվարի 5, 2016թ.</b>  <i>ՀՀ Կառավարության 29.01.2016թ. N50-Ն Որոշումը՝ ՀՀ Կառավարության 2004թ. Հունիսի 10-ի N946-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	<p>Խոսքը վերաբերում է «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերն ու ընթացակարգը հաստատելու մասին» Որոշմանը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Այսպիսով որակավորման կարգ ստանալու համար հայտը տրվում է էլեկտրոնային եղանակով ( հաստատվում էլեկտրոնային ստորագրությամբ), որի մուտքագրված լինելու փաստը հավաստվում է հետադարձ ծանուցմամբ: Դրական եզրակացություն ստանալուց հետո նախկին 3 օրերի փոխարեն, այժմ արդեն <b>երեք աշխատանքային օրերի</b> ընթացքում որակավորող մարմին է ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակները, որոնք <b>ես չեն վերադարձվում</b> (ինչպես նախկինում):</li> <li>• Ի դեպ Հայտն ստանալուց հետո նախկինում 15 օրյա, իսկ այժմ <b>5 աշխատանքային օրվա</b> ընթացքում որակավորող մարմինը քննարկում է այն, շարունակում որակավորման գործընթացը կամ ընդունում որոշում հայտը մերժելու մասին:</li> <li>• Հայտի մերժման <b>ևս մեկ հիմք</b> է առաջացել այն է՝ դրական եզրակացությամբ արձանագրությունն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում որակավորող մարմին հայտատուն չի ներկայացնում պետական տուրքի վճարման անդորրագիրը:</li> <li>• Հայտում կամ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների առկայության դեպքում որակավորող մարմինը հայտն ստանալուց հետո նախկին 5 օրվա փոխարեն արդեն <b>5 աշխատանքային օրվա</b> ընթացքում դրա մասին հայտում նշված եղանակով տեղեկացնում է հայտատուին՝ հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում թերությունները վերացնելու համար:</li> </ul>
<p>4.</p>	<p><b>ՊՏ N10 (1190) Փետրվարի 10, 2016թ.</b>  <i>ՀՀ Կառավարության 29.01.2016թ. N 62-Ն Որոշում՝ ՀՀ Կառավարության 2003թ ապրիլի 23-ի N505-Ն որոշման մեջ</i></p>	<p>Խոսքը վերաբերում է չմշակված, չտեսակավորված արդյունաբերական՝ չմշակված կամ պարզապես սղոցված, ձեղքված կամ կոպիտ մշակման ենթարկված, ոչ արդյունաբերական՝ չմշակված կամ պարզապես սղոցված, ձեղքված կամ կոպիտ մշակման ենթարկված ալմաստների ՀՀ ներմուծման և ՀՀ-ից արտահանման դեպքում <b>Քիմբերլի</b></p>

*Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:*

**«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ**

	<p><i>փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին</i></p> <p><i>Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	<p>գործընթացի հավաստագրման ծրագրի պահանջներին համապատասխան միջոցառումների իրականացման կարգին:</p>
<p>5..</p>	<p><b>ԳՆԱՍ N4 (547) Փետրվարի 15, 2016թ.</b> ՀՀ Ֆինանսների նախարարի 01.02.2016թ. Պաշտոնական պարզաբանում՝ Անհատ ձեռնարկատերերի (նոտարների) գործունեություն չիրականացնելու մասին հայտարարության ներկայացման վերաբերյալ</p> <p>Պարզաբանման 1-ին կետը տարածվում է պարզաբանման տրման ամսաթվից հետո ծագած հարաբերությունների վրա:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Շրջ.հարկ վճարող համարվելու համար հայտարարություն <b>ներկայացրած</b> անհատ ձեռնարկատերերը (նոտարները) գործունեություն չիրականացնելու (դադարեցնելու) մասին հայտարարություն ներկայացնելուց հետո ՀՀ Եկամտային հարկի մասին օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված չափերով եկամտային հարկ չեն հաշվարկում (վճարում): Իսկ նման հայտարարություն <b>չներկայացնելու</b> դեպքում՝ վերոնշյալ հոդվածով սահմանված չափով հաշվարկում են (վճարում):</li> <li>• Հայտարարությունը ներկայացնելուց հետո հետագա յուր. օրացույցային տարվա համար մինչև տվյալ տարվա փետրվարի 20-ը ներառյալ շրջ. հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելը հիմք չէ հարկ վճարողի գործունեությունը վերսկսած համարելու և նշված հոդվածով եկամտային հարկ հաշվարկելու (վճարելու) համար:</li> </ul>
<p>6.</p>	<p><b>ԳՆԱՍ N4 (547) Փետրվարի 15, 2016թ.</b></p>	<p>Օրացույցային տարվա ընթացքում նոր ստեղծված(պետական գրանցում ստացած,որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ նոտար նշանակված)ԱԱՀ վճարողը, Օրենքով սահմանված մնացած բոլոր պայմանները բավարարված համարվելու դեպքում ձեռք բերված ապրանքների ու ստացած ծառայությունների գծով հարկային</p>

*Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:*

**«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ**

	<p><i>ՀՀ Ֆինանսների նախարարի 01.02.2016թ. Պաշտոնական պարզաբանում՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ պարբերությամբ սահմանված դրույթների վերաբերյալ</i></p>	<p>հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները կարող է հաշվանցել առանց մատակարարներին կամ ծառայություն մատուցողներին վճարում կատարելու: Տվյալ դեպքում 2016թ.-ի հունվարի 1-ից կարող է հաշվանցել նաև երբ 1.ապրանքների մատակարարում 2.ծառայությունների մատուցում և/կամ 3. անհատույց(մասնակի հատուցմամբ) սպառումը գործարքների հարկվող շրջանառությունը (առանց ԱԱՀ) 2014թ.-ի ընթացքում չի գերազանցել 100մլն դրամը, իսկ 2015թ.-ի ընթացքում գերազանցել է 500 մլն. Դրամը:</p>
<p><b>7.</b></p>	<p><b>ԳՆԱՏ N4 (547) Փետրվարի 15, 2016թ.</b></p> <p><i>ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 15.01.2016թ. N2 Հրաման՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 30.06.2014թ.-ի N79-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին</i></p> <p><i>Հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:</i></p>	<ul style="list-style-type: none"> <li>• «Ձեռք բերված մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկների՝ գործատուի մոտ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրումը կազմակերպելու մասին» Պայմանագրի՝ «Պայմանագրի գինը ու վճարման կարգը» կետում <b>ավելացել է դրույթ, համաձայն որի, այն դեպքում,</b> երբ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետն (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Տարածքային կենտրոնի, որպես գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող կամ քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցող մասնագետ) <b>անհատ ձեռնարկատեր է՝</b> Պայմանագրի համաձայն գործատուին վճարվող դրամական միջոցները նախատեսված են նրան ամսական կտրվածքով սույն կետում նշված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով գումար վճարելու համար</li> <li>• «Այլ բնակավայրերում թափուր աշխատատեղը համարվելու մասին» Պայմանագրում Գործատուի պարտականությունների մեջ ավելացել է մի ենթակետ, համաձայն որի, Գործատուն պարտավոր է Տարածքային կենտրոնի կողմից գործատուի բանկային հաշվին, որպես աշխատավարձի հավելում փոխանցված ֆինանսական միջոցները հիմնական աշխատավարձի հետ միասին վճարել շահառուին</li> </ul>
<p><b>8.</b></p>	<p><b>ՊՏ N14 (1194) Փետրվարի 24, 2016թ.</b></p>	<p>Խոսքը վերաբերում է «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը հաստատելու մասին» որոշմանը</p>

*Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:*

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

<p>ՀՀ Կառավարության 29.12.2015 N1571-Ն Որոշումը՝ ՀՀ Կառավարության 05.12.2013թ. N1364-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին</p> <p>Որաշման մի մասն <b>ուժի մեջ է մտել 25.02.2016թ.-ից, մյուս մասը 01.07.2016թ.-ից:</b></p>	<p>Վերոնշյալ որոշման մեջ «ապրանքների, արտադրանքի առաքման» և «ապրանքների, արտադրանքի տեղափոխման» հաշվարկային փաստաթղթերից բացի ավելացել է նաև «<b>ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման</b>» հաշիվ ապրանքագիրը: Կատարվել են նաև <b>խմբագրական փոփոխություններ</b> և որոշ բառերի ավելացումներ. Օրինակ՝ «ուղեկցող հաշվարկային» բառերը փոխարինվել է «հաշվարկային» բառով, «Առաքման ամսաթիվը» բառերը փոխարինել «Տեղափոխման ամսաթիվը» բառերով և այլն:</p> <p>Իսկ վերոնշյալ որոշմամբ 2016թ. հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել «<b>ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ</b>» հասկացությունը. այն դուրս է գրվում, եթե գործարքը պայմանագրում նշված պայմաններով չի կատարվել, կամ գործ ունենք ժամկետանց ապրանքի հետ, կամ գնորդը հրաժարվել է ապրանքը կամ ծառայությունը ընդունելուց: Գործարքի ճշգրտման արդյունքները ներառում են այն հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում, երբ դուրս է գրվել ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ:</p>	
<p><b>9.</b></p>	<p><b>ՊՏ N15 (1195) Փետրվարի 24, 2016թ.</b></p> <p>ՀՀ Կառավարության 18.02.2016թ. N 134-Ն Որոշում՝ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող և հետագայում ԵՏՄ անդամ այլ պետություններ արտահանվող ԵՏՄ տեխնիկական կանոնակարգերով նախատեսված ապրանքների համար համապատասխանության</p>	<p>Սահմանվում է, որ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող և հետագայում ԵՏՄ անդամ այլ պետություններ արտահանվող ԵՏՄ տեխնիկական կանոնակարգերով նախատեսված ապրանքների համար համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը մաքսային մարմիններին կարող է ներկայացվել նշված ապրանքների՝ ԵՏՄ անդամ այլ պետություններ արտահանման ժամանակ՝ նախքան «Մաքսային տարածում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպումը:</p>

*Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև համապատասխան խորհրդատվություն:*

«Հարկային և հարակից ձեռնարկատիրական գործունեության» ամենաթարմ օրենսդրական փոփոխություններ

գնահատման վերաբերյալ  
փաստաթղթերի ներկայացման մասին:

Որոշումն ուժի մեջ է մտնում  
25.02.2016թ.-ից, և դրա գործողությունը  
տարածվում է 2016թ. Հունվարի 1-ից  
հետո ծագած հարաբերությունների  
վրա:

*Նշված մոտեցումը հանդիսանում է նախնական և ընդհանուր կարծիք, մասնագիտական հաղորդակցության համար է և չի կարող հիմք  
հանդիսանալ որոշում կայացնելու համար: Հորդորում ենք կոնկրետ իրավիճակում հաշվի առնել կիրառման պահի օրենսդրության  
դրույթները և գործարքի բոլոր հանգամանքներն ու առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում ստանալով նաև  
համապատասխան խորհրդատվություն:*